



ՌՅԻԱ. 1872 — ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՄԱՅԻՍ

ԳԱՂՂԻԱ Ի 1871 — ԳԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Տես երես 100:) — Շարունակութիւն և վերջ:

ԲԱՐԻ Զ

Հրդեհը մարեր է. մտածեցէք մէյմը աւերակները: Վիճակն ընկճեր է. այլ ահա տեսէք, Բարիդ տխուր, անշարժ ու մերկ է: Իսկ մեր ստոյգ վիճակը ահա այսպիսի է: Ամենուն միտքը ընկճեալ է. փողոցները անմարդի ամենեւին: Ա՛լ ոչ կիրք ունինք և ոչ գութ. բեկած, էրած, դժնեայ ենք. վէճսայլ տարուած գերեաց խումբերուն անցը կը տեսնենք առանց զանոնք դիտելու: Եւ ոչ բերան մը կայ որ « թշուառականք » կանչէ, կամ « խեղճ մարդիկ »: Նոյն իսկ գինուորները լռիկ են. թէպէտ և յաղթականք, բայց և այնպէս տխուր են. ոչ կը խմեն և ոչ կ'երգեն: Բարիդ մունջ մարդիկներէ յարձակմամբ առնուած քաղաք մը կը նմանի. ոչ կիրք կ'ելլեն և ոչ կու լան: Այդ եռագոյն դրօշներն որ ամեն պատուհանաց վրայ կը ծածանին, տեսնողները կը վարմացնեն. կարծես թէ չեն գիտեր թէ ինչու համար ասոնք պատուհանները դրուած են:

Ոչ թէ անոր համար որ, գլխաւորապէս վերջի ատենները, ժողովրդեան մեծագոյն մասը կաթոգին փափագած չէր վէճսայլուոց յաղթական ելլելուն. հապա անոր համար որ այնպէս յոգնած են մինչ և ոչ դո՛հ ըլլալու պատեհն ունին: Մտածեցէք մէյմը. պաշարումը, սովը, ձանձրութիւնը, բացակայ ծնողքն և ազգականներն, թշուառութիւնը, և ապա Մոնմառդուի ապստամբութիւնը, յանկարծական պատահարքն, վարանքը, գիշեր ցորեկ թնդանօթին բոմբիւնը, հրացանից հեռաւոր անընդհատելի շառաչը, արտասուածութիւն մայրերն, հալածեալ որդիքն, բոլոր այդ թշուառութիւնները այն դժբաղդ քաղաքին վրայ ծանրացան: Նախ Տիբերեայ ժամանակի Հռոմն էր, արդ նմանապէս Հռոմ է՝ այլ բարբարոսներէն թողուածը: Սիբարիսն էր որ գնդակոծուեցաւ: Այնչափ այլայլութիւնք ու վիշտք սպառեցին այն հեշտասէր քաղաքը. և ապա բոլոր

այն արիւնը, այնչափ արիւնը: Դիակունք փողոցաց մէջ, դիակունք դրանց ետեւը, ամեն դին դիակունք: Ո՛հ, անտարակոյս, յանցաւորը էին այդ մարդիկն որ բռնեցին ու սպաննեցին. եղեռնագործ էին այդ կանայք՝ որ մէկ ձեռքով օղին բաժակաց մէջ կը լեցնէին և միւսովը տանց մէջ քաթածէթ կը հոսեցնէին: Սակայն նախանձայուզութեան եռանդին սկիզբը չէ՝ երբեք խաբուած մարդ: Արդեօք բոլոր սպաննուածները յանցաւոր էին: Բայց և այնպէս բոլոր այդ պատուհասներուն տեսարանը, ըստ արժանւոյն կամ ոչ, միշտ անգութ է: Անմեղքն՝ արդարութեան վրէժխնդիր ժամանակը կը տխրին: Ո՛հ, այո՛. Բարիզ այս ատեն հանգիստ է, անգործ՝ ինչպէս կռուի դաշտ մը՝ յաղթութեան յաջորդ օրը. խաղաղ՝ ինչպէս գիշերն ու գերեզմանը: Ահաւոր խոնջութեամբ մը ընկճեալ ենք: Արդեօք ելլենք պիտի այս ստուերէն և այս անգղայութենէն: Բարիզ, ձանձրացած, ընկճած, անցեալէն տխրութեամբ միտքը մէկ զի կը դարձնէ, այլ չհամարձակիր աչքերն առ ապագայն տանելու:

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես երես 117:)

Բ. — Երուսաղէմ և իր շրջակայքը:

Երուսաղէմայ վրայ խօսած ժամանակնիս չենք կրնար լռելեայն անցնիլ Գրիստոսի Չարչարանաց կամ Խաչի ճանապարհը. այսինքն այն ճամբան ուսկից քաղեց Յիսուս սկսեալ Պիղատոսի տունէն մինչև Գոդգոթիա:

Նախ աչքի զարնողն Պիղատոսի տունն է. որուն աւերակները դեռ ինչուան հիմա կեցած են. և մարմարեայ անդատակը ուր կը նստի հիմա Երուսաղէմի քաղաքապետը: Անեղծ մնացած

է այն սանդուղը, որոյ քով հագուել ցուցին Յիսուսի քղամիշ կարմիր և փշէ պսակով պսակեցին: Կը տեսնուի դարձեալ այն կամարը, ուսկից Պիղատոս ցուցուց ժողովրդեան զՅիսուս՝ զանեւէն և փշով պսակելէն ետքը, և ուր ըսաւ Անա Այրոյ: Հարիւր քայլ հեռւորութեամբ Աստուածաճենաց ցաւոց եկեղեցին կայ. ուր կը պատմուի թէ հանգիպած ըլլայ Աստուածածին իր Որդւոյն՝ մինչ խաչն ուսն առած կ'երթար: — Աւելի հեռու Սիմոն կիւրենացին օգնեց Յիսուսին տանելու չարչարանաց գործին: — Մերձաւոր ուրիշ ճամբայ մը, յորում մէկ կողմը կը բնակէր աղքատն Ղազարոս, և միւս կողմը մեծատունը, կը զարթուցանեն ի մեզ աւետարանին գեղեցիկ առակը: — Մեծատան տունէն ետքը կը ցուցուի այն տեղն, ուր տեսնելով Յիսուս զկանայս որ կու լան իր վրայ, ըսաւ. « Դատերը երուսաղէմի, մի լայք ի վերայ իմ, այլ լացէք, և այլն »: — Ետքը կը տեսնուի վերոնկրայի տան տեղը, այն բարեպաշտ կնկան, որ սրբեց Յիսուսի քրտինքը. ետքը դատարանական դռներ, որ Գոդգոթիա կը տանի, ուր կը լմնայ Չարչարանաց ճանապարհը, որ մօտ մզնին մը երկայնութիւն ունի:

Երուսաղէմ քաղաքը լի է քրիստոնէական կրօնից ուրիշ զարմանալի յիշատակներով: Հայք մատուռ մ'ունին Աննա քահանայապետին տանը տեղւոյն վրայ, ուր տարին զՅիսուս ջիթեանաց պարտիզէն: — Աննա քահանայապետին տունէն քիչ մը հեռու քաղքին արևելեան կողմը բոլորովին կործանած եկեղեցի մը կայ, Սիմոն փարիսեցւոյն տանը տեղւոյն վրայ շինած: — Յիշելու ենք նաև Աստուածածնայ մօր Սրբուհւոյ Աննայի վանքը. Պետրոսի բանտը Գոդգոթիայի մօտ, որուն պատերն միայն մնացած են. Չերեթեայ տունը, ուր հիմա Յունաց մեծ եկեղեցի մը կայ. Մարկոս Աւետարանչին մօր Մարիամու տունը, որոյ վերայ Ասորոց եկեղեցի մը շինուած է պղտի, մութ, և անշուք. վերջապէս Յակոբայ Առաքելոյն մարտի